Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2018 **թվականի հոկտեմբերի** 31-**ի նիստի** N 4 **արձանագրությունից**

ԼՍԵՑԻՆ.- «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝ 2018 թվականի մարտի 5-ի նիստում (արձանագրություն N 5) հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի ձևավորման և աշխատանքի ընթացակարգում» փոփոխություն կատարելու մասին հարցը:

Զեկուցող՝ ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Պ.Ա.Քալանթարյան**:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-

Պրոֆեսոր Կ.Լ.Աթոյանը, դոցենտ Ա.Գ.Հակոբյանը:

Զեկուցողը և արտահայտվողները նշեցին. «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝ 2018 թվականի մարտի 5-ի նիստում (արձանագրություն N 5) հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի ձևավորման և աշխատանքի ընթացակարգում» առաջարկվում է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կազմում չընդգրկել ռեկտորատի ներկայացուցչին, համապատասխան ֆակուլտետի դեկանին կամ նրա տեղակալին:

ՈՐՈՇԵՑԻՆ.- «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝ 2018 թվականի մարտի 5-ի նիստում (արձանագրություն N 5) հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի ձևավորման և աշխատանքի ընթացակարգի» «Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի ձևավորման կարգը» բաժնի 6-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունը՝ 6-րդ կետից հանել «ռեկտորատի ներկայացուցիչը, համապատասխան ֆակուլտետի դեկանը կամ նրա տեղակալը» բառերը (որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն՝ կողմ՝ 51, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Գիտական խորհրդի նախագահ՝ **Կ. Լ. Աթոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2018 թ. Հոկտեմբերի 31
Երևան